

քեպիսկոպոս Եդեսիոյ...» եւն: Գէորգ Բենիամին, Եպիսկոպոս Եդեսիոյ ասորերէն վկայական տուած է, լատին թարգմանութեամբ (էջք 134. 162 եւ 199), որուն ասորագրութիւնն է, «Georgius Benjaminus Episcopus Edenensis Armenus.» Յովակիմ Արքեպիսկոպոս կը գրէ (էջք 105, 132, 160 եւ 196). «Ես Յովակիմ Արքեպիսկոպոս Էջմիածնայ այս վերոյգրեալն կու հաստատեմ, այս իմ ձեռացագիրս է:» Ասոնցմէ զատ նաեւ Տիմոթէոս Գառնուկ, Եպիսկոպոս Մարտինի, որ թէպէտ 1688 եւ 1690ին Բաղդաշի մէջ երեք հայերէն գիրք կամ տետրակ տպած է, սակայն ինքն հայ չէ, այլ քաղղէացի: եւ քաղղեարէն վկայական գրած է (անդ, էջք 106, 133, 161 եւ 198):

Իսկ մեր Յարութիւն Արքեպիսկոպոս նոյնպէս չորս վկայութիւն գրած է (էջք 105, 132, 160 եւ 197), որոնցմէ մին (էջ 105) այստեղ յառաջ կը բերեմ.

Իս Յուրի Անաստաս արհեսպն կեսարիա՝

պլատինոյ ձեռամբ իմով գրեցի.

Արժանի է ճշմարտապէս ով երջանկաւունեղ հայր. զի իցեն վերապտնջլք. ի յեկեղեցեցւոյ այնք որք իւրեանց առաքինութիւնքն զարդարեցին զնոյն եկեղեցին Երանեցեալն փիւս Ե երրդն զի ոպ էր գերազանցագունեղ ի վր համայնից հաւատացելոց հայրապետական արժանապատուութեամբ. Եւ գահիւ, այսպէս եւս յառաջեաց զնոսին բարի օրինակօք առաքինութեամբ. Գերաբարձր արժանապուծի սորա ոչ եղեւ փոքրագոյն քան զարբուծին իւր. Եւ ոչ ամենաբարձր որբութիւն. ստորնագոյն քան զարժապատուութիւն. Հաճեսցի ուրեմն